նակը բազմաթիւ զատ-զատ օրէնքներով սահմանում է տասանորդներ կամ որոշ տոկոսներ յօգուտ պետութեան:

Ու Հայաստանում չկայ մի արդիւնաբերութիւն, մի արհեստ, մի ձեռնարկ, մի խօսքով՝ մի գործողութիւն, որը արդիւնք է բերում եւ ենթակայ չէ տասանորդի կամ որոշ տուրքի՝ յօգուտ պետական գանձարանի: Բերքից տալիս են, առեւտրից տալիս են, հանքերից ու ջրերից տալիս են, արհեստանոցներից տալիս են, տուն շինողը տալիս է, հող գնողը տալիս է, ծառ տնկողը տալիս է, չէնք ունեցողը տալիս է:

Ներմուծուող ու արտահանուող ապրանքների մաքսերի մասին խօսք լինել չի կարող. նրանք ամէնքը ենթակայ են մաքսի: Միմիայն ոսկու, արծաթի, զէնքի ու զինամթերքի ներմուծումը, հասկանալի պատճառով, ազատ է մաքսից ու հարկից (ՃԺԳ, ՃԺ): Աւելի. ոսկի եւ արծաթ ներմուծողը «գոցի շնորհս ի տանէն հայոց» (ՃԺԳ):

Նոյն նիւթերի արտահանումը արգելւում է, զէնքինը ու զինամթերքինը՝ բացարձակապէս, իսկ ոսկունը եւ արծաթինը՝ պայմանական: Ոսկի եւ արծաթ արտահանողը պարտաւոր է նախ՝ ներկայացնել երաշխաւոր եւ երկրորդ՝ 100-ին 130 ներմուծել 2 տարուան ընթացքում (ՃԺԴ): Իսկ եթէ մէկը կը ցանկանայ իր ոսկին ու արծաթը Հայաստանից դուրս տանել, նա պարտաւոր է 1/3-ը տալ հայոց տանը եւ մնացած 2/3-ը միայն տանել (Ն):

Բոլոր հարկերը եւ մաքսերը տրւում են երկու ձեւով — ե՛ւ նիւթով, ե՛ւ դրամով (ՃԿԷ): Հարկերը հաւաքողը եւ նրանց համար անմիջական պատասխանատուն դաւառապետներն են (ՃԿԸ): Հարկի ենթակայ են Հայաստանի բոլոր բնակիչները — ե՛ւ բնիկ, ե՛ւ օտարական, ե՛ւ մահմետական, ե՛ւ քրիստոնեայ, ե՛ւ ոչ-քրիստոնեայ (ՃԻԸ): Օտարականը եթէ կամենայ թողնել Հայաստանը եւ հեռանալ, ազատ է, բայց միայն իր ունեցուածքի մէկ տասներորդը պիտի տայ հայոց տանը՝ մնացած ինը տասներորդը հետը տանել կարողանալու համար (ՃԻԸ):

Յատկապէս մեծ տուրքեր են դրուած շրջայլութեան առարկաների վրայ, որը ժամանակի աղդեցութեամբ եւ պետական գանձարանն ի հաշիւ ունեւորների հարստացնելու ցանկութեամբ պէտք է բացատրել:

Նմուշի համար բերենք նախ՝ մի քանիսն այն յօգուտածներից, որոնցով տասանորդն է սահմանւում, ապա՝ մի քանիսն էլ՝ շրջայլութեան առարկաներից առնուող տոկոսների վերաբերող.—

1. «Ամենայն ծննդոց կենդանեաց, անասնոց եւ անբանից, ամենայն տարոյ ծնեցելոց, ի նմանէ հատուցանել տասանորդս» (ԺՃԲ):

2. «Ամենայն սողնոց, թռչնոց ծննդոց հատուցանել տասանորդս» (ՃԺԳ):

3. «Ամենայն ծառոց, տնկոց, բուսոց բերմանէ տասանորդս (ՃԺԴ):

4. Ի բերմանէ որթանց արրիչումին տասանորդս» (ՃԺԵ):

5. «Ի անտառէ հատեալ փայտէ, կթեալ մեղր եւ մոմէ տասանորդս» (ՃԺԶ):

Այժմ միւսը.—

1. «Սաղրի կօշիկ հագանողն հատուսցէ տարէն երկու դրամ արծաթ, կանայք ազատ» (ՃԻԶ):

2. «Զառ գօտիկ եւ զառ հաչիայ զգենողն տարէն տասն դահեկան, կանայք ազատ» (ՃԻԷ):

3. «Երծաթապատ զգեստօք ձի հեծնողն տարէն տասն դահեկան. ոսկապատն — քսան դահեկան, ակունքապատն — հարիւր դահեկան» (ՃԻԹ, ՃԼ, ՃԼԱ):

4. «Հայելի մեծ, քան թէ մի կանդուն, պահողն տալիս է տարէն երկու դահեկան: Ապրրշմէն խալու վրայ նստողն — հինգ դահեկան» (ՃԼԶ, ՃԼԷ):

5. «Մարմարէ հաւզ (աւազան) տան շինողն տարէն քսան դահ.: Սեաւ քարէ հաւզ — տարեկան հինգ դահեկան» (ՃԼԸ, ՃԼԹ):

6. Ամէն ոք, առանց որեւէ տուրք վճարելու, կարող է նստել մէկ ձիանի կառք, իսկ մէկից աւելի ձի ունեցող կառքի համար վճարում է այսպէս.—

«2 ձիով կառէթն տարէն 10 դահ. երծաթ, 4 ձիով՝ 20 դ., 6 ձիով՝ 40 դ., 8 ձիով՝ 80 դ., 10 ձիով, որ միայն մայր դատաւորը եւ իշխանները կարող են ունենալ 160 դ., 12 ձիով,